Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

47

ՓՐԿԱՐԱՐ ՀՐԵՂՏԱԿԸ

Պիէս 2 գործողութեամբ։

(Պատանիներն Համար)

Հատանուն վէպից փոխադրեց ՓԵՐՐՕ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Մայֆեր — գնդապետ.
Լիզա — նրա կինը.
Արբի — ազգիկը.
Կրոմվիլ խշխան.
Սպայ.
Ա. գնդապետ
Բ. գնդապետ
Մայֆերի ընկերները.
Ա. պաշտօնեայ, բերդի վերահսկիչը (ծեր).
Բ. պաշտօնեայ, նրա ընկերը.
Քարտուղար.
Սպասաւոր.
Զինուորներ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Մայֆերի Ոսկի կաշաւորւած սենեակը.

1. ՄԱՑՖԷՐ միայնակ, յետոյ ՍՊԱՍԱՒՈՐ

Ոչ, ոչ, այսպէս չի կարելի... Ի՞նչ անեմ ես... այս ինչու ուշացաւ... Մինչև երբ սպասեմ չարագուշակ նամակին... բայց ոչ, ինչ եմ ասում, գուցէ և լաւ է... եթէ մեզ հրաւիրեցին բերդը՞... նշանակում է պատրաստ են մեր կախաղանները։

(Մտնում է սպասաւորը, տալիս է մի ծրար եւ դուրս է գնում: Մայֆերը կարդում է եւ յանկարծ խըփում սեղանին. մնում է ապշած մի քանի վայրկեան, յետոյ անց ու դարձ է անում ջղայնացած. կանգնում է կրկին սենեակի մէջ տեղ ու կանչում). Լիզա, Լիզա...

2. ԼԻԶԱ

(Շտապ քայլերով մտնում է). Ի՞նչ ես կամենում, սիրելի Մայֆեր. (Մի-ջոց). Այդ ինչ է պատահել քեզ. (Մտնում է, բայց Մայֆերը չի խօսում, այլ նայում է պլշած աչքերով). Շուտ, խօսիր. դու շատ տարօրինակ ես թւում ինձ, բարկացած ես թէ հիւանդ. դէ սիրելիս, շուտ, խօսիր։

ՄԱՑՖ.—*Հեռու, մի տանջիր ինձ։*

ԼԻԶ.—*(վախեցած) Գուցէ ճանապարհին յոգնել ես, սիրելիս, եկ մի քիչ հանգստացիր։*

ՄԱՑՖ.—*(Կտրուկ). Ոչ, ես յոգնած չեմ, մի փոքր համբերիր և դու ամեն բան կիմանաս։*

ԼԻԶ.—*(Արտասւախառն). Դէ, ասա, սիրելիս, ասա, ինչ է պատահել քեզ, որ դու այդքան վրդովւած ես։*

ՄԱՑՖ.—*Թող քո այդ սիրելի բառը և փաղաքշանքները. դրանք խլում են իմ արիւթիւնը։*

ԼԻԶ.—*Օ՜հ, Տէր իմ Աստուած, այս ինչ եմ լսում... (Մօտենալով) ինչու, բայց ինչու ես այդպէս խօսում։*

ՄԱՑՖ.—*Ես խնդրում եմ, բարկացիր վրաս, անարգիր ինձ, բայց մի արտասանիր այդ խօսքերը, դրանով աւելի ես բորբոքում սրտիս մէջ եղած կրակը։*

ԼԻԶ.—*Դէհ, շուտ ասա, ինչու ես այլայլւած, բացատրիր։*

ՄԱՑՖ.—*Ես անկարող եմ բացատրել. այսքանը կասեմ միայն, որ այսուհետև տէր չեմ քեզ և ոչ էլ հայր միակ աղջկանս, Աբբիին (լալով զբըկախառնւում է). Ես պիտի հեռանամ դէպի... յաւիտ...*

ԼԻԶ.—*(Նսաղած ձայնով). Իմ աչքի լոյս, ինչու ես ասում այդ։*

ՄԱՑՖ.—*Այո, սիրելիս, ազատւելու ուրիշ միջոց չկայ։*

ԼԻԶ.—*(Ցնցւելով). Ազատւելու, ինչպէս թէ ազատւելու, ինչ է պատահել քեզ, Մայֆեր, շուտ պատմիր, մի տանջիր ինձ քո կցկտուր խօսքերով, ասա պատճառը, չլինի թէ...*

ՄԱՑՖ.—*(Ցանկարծ). Սպասիր, ամեն բան իմանալու մի շտապիր։*

ԼԻԶ.—*Ինչպէս չշտապել, երբ դու կամենում ես մահացնել ինձ միանգամից։*

ՄԱՑՖ.—*Լսիր, հասկացիր ինձ, հաւաքիր բոլոր ոյժերդ և եղիր քաջ ու անսրկիւղ։*

ԼԻԶ.—*Ես պատրաստ եմ...*

ՄԱՑՖ.—*Դատարանը արդէն արտասանել է մեր վճիռը։*

ԼԻԶ.—*(Վախեցած), Ի՞նչպէս, ինչ վճռեցին. և դու ինչու ես թաքցնում ինձանից։*

ՄԱՑՖ.—Ահա սեղանի վրայ է Կրոմվելի ուղարկած թուղթը. կարդայ և դու ամեն բան կըհասկանաս։

ԼԻԶ.—(Հրազուլթեամբ վերցնում է թուղթը ու բարձր կարդում). «Պատրաստուիր մի ժամից ընդունելու զինուորական վաշտը, որի ուղեկցութեամբ պիտի ներկայանաս բերդը, ուր կըլինեն և միւս ընկերներդ, Մեծն Կրոմվելը կարդալու է վերջնական որոշումը։ (Դէպի Մայֆերը) և ինչ. գուցէ ներել է ձեզ... մեզ...

ՄԱՑՖ.—Ո՛չ, սիրելիս, արդէն որոշուած է, որ երեքիս էլ պէտք է կախեն։ Ահա որոշումը։

ԼԻԶ.– (Թուլացած). Կախե՞լ. ճ, Տէր իմ Աստուած. (ուզում է ընկնել, բայց Մայֆերը զրկում է ու նստեցնում աթոռի վրայ)։

ՄԱՑՖ.—Զսպի՛ր քեզ, խելքդ գլուխդ հաւաքիր. կարծեմ Աբբին գալիս է բարի գիշեր ասելու, արտասուքդ սրբիր ու աշխատիր հանդիստ երևալ նրա մօտ։ Մի բոպէ մոռացիր ամեն բան։

ԼԻԶ.—Մոռանա՞լ... այդ անկարելի է. մոռանալ մի անձի, որ քանի տարիներից ի վեր նուիրուած է եղել մեզ... եղել է մեզ կարեկից ամեն ժամ, ամեն վայրկեան...

ՄԱՑՖ.—Սպասի՛ր, հաւաքիր ոյժերդ և համբերատար եղիր։

ԼԻԶ.– Օ՜ Աստուած իմ, այս ի՞նչ օրի հասցրիր մեզ. ի՞նչ մեղքի համար ես պատժում մեզ։

ՄԱՑՖ,– Ո՛չ, մի ասիր այդպէս, այդ Նախախնամութեան կամքն է։

ԼԻԶ.—Կաշխատեմ մոռանալ, բայց չէ՞ որ սիրտս պատռւում է կսկծից. մենք այսուհետև ի՞նչ պէտք է անենք. կորած ենք մենք. (Հեկեկում է։ Լռութիւն)։ Ո՛չ, ո՛չ, քեզ չենք թողնի (Ցատկում է տեղից և նետում Մայֆերի գիրկը). մենք էլ կըգանք. մեզ քաղցր է մեռնել քեզ հետ, քան ապրել այս աշխարհում միայնակ, առանց քեզ. պատրաստ եմ քեզ հետ կախաղան բարձրանալ, գցել իմ վիզը այն չեանը, որը շարունակ մահացրել է ոճրագործներին ու աւազակներին։

ՄԱՑՖ.—(Շարունակ հանգստացնելով). Զսպի՛ր քեզ, Աբբին գալիս է։ Նա կիմանայ, կըհասկանայ մեր դրութիւնը և կըտանջի... գոնէ նրա մատաղ կեանքը խնայիր. (արտասուում է)։

ԼԻԶ.—(Ցուսահատ). Ո՛չ, թող նա էլ մեռնի մեզ հետ. քո մահից յետոյ թունաւորուած կըլինի մեր ամբողջ կեանքը...

ՄԱՑՖ.—Ես նրան թողնում եմ քո հովանաւորութեան տակ, բոլորովին առողջ և ուրախ, և ցանկանում եմ, որ դու սիրես նրան անչափ, իմ միակ աղջկանս, Աբբիին։ Իմ մահից յետոյ նա կըլինի քո միակ միխիթարանքն ու նեցուկը... նա պիտի կենդանի մնայ ինչպէս փլուզ տան յենարան սիւնը... նա պիտի ապրի, որպէսզի չմարի ու անհետ չկորչի այս տան ճրագը... նա պիտի ապրի ու բողոքի անարդարութեան դէմ...

ԼԻԶ.—Ո՛չ, քեզ չենք թողնի, դու պէտք է կենդանի մնաս... և կամ քեզ հետ երեքով մեռնել... Օ՜, ծանր է, շատ ծանր է բաժանուելը։ Օ՜, անգութ Աստուած, ինչո՞ւ, ինչո՞ւ մեզ հասցրիր այս ողբալի դրութեան. զօրեղն ու անզօրը, արդարն ու յանցաւորը տանջւում են հաւասար...

ՄԱՑՖ.—Սպասի՛ր, երբ ես պատմեմ, այն ժամանակ կըտեսնես, որ այդպէս էլ պէտք է լինէր։ Մենք ի՞նչո՞ւ հեղեղի պէս թափեցինք հազարաւոր մարդկանց արիւնը, չէ՞ որ նրանք էլ մեզ պէս երջանիկ կեանքով ապրել էին ուզում, մենք ի՞նչո՞ւ կոտորեցինք նրանց՝ բաժանելով ծնողը որդուց, որդին ծնողից և վերջապէս մեզ պէս սիրող սրտերը միմեանցից. մենք սպանեցինք այնպիսիներին, որ մի ամբողջ ընտանիքի սիւնն էին կազմում. մենք սպանեցինք այնպիսիներին, որոնց

արտուն էր տարիներից ի վեր ծնողների, բարեկամների ու սիրելիների կարոտը... և ինչեր, ինչ անգթութիւններ գործեցին մեր բարբարոս գօրքերը... այրեցին... գիւղ ու քաղաքներ հրդեհեցին, որոնց մէջ ողջ-ողջ այրուեցին հաւասարապէս մատաղ մանուկներ, ալեզարդ ծերեր. մի խօսքով նրանք, որոնք փախչելու, կրակի բոցից ազատուելու անընդունակ էին., օհ, նրանց լացն ու կոծը, աղաչանքներն ու կրակի մէջ ճարճատող մարմինները սարսռեցնում են ինձ։ Լիզա, սիրելիս, և դեռ չէ անհետացել իմ մտքից, դեռ պատկերացած է իմ աչքերի առաջ պատերազմի վայրը, հրդեհուած անների միջից ցայտող հրեղէն լեզուները, որոնք ցրում էին իրենց չորս կողմը ատողանման կայծեր և երբեմն քողարկում էր քլքլացող ծուխը սև ամպի նման և մերթ բաց անում մերհեռադիտակների առաջ մոայլ տեսարանը, մի ժամայ ընթացքում լափեց կրակը գարերից ի վեր շէնացած, կենդանի գիւղը և տեղը մնաց ամայի, սևացած աւերակներ, մոխրի կոյտեր, սևացած գերաններ, խանձուած մարդկանց դիակներ. մայրը որդուն գրկած, բերանը բաց լալահառաչ. և այդ մի ժամայ ընթացքում կարուեց կենդանի արարածների ձայնը ու տիրեց անդորր մեռելային լռութիւն։ Իսկ մի ուրիշ տեղ շողշողուն սրերի ու սուիններին շառաչիւնը, հրացանների ու թնդանօթների որոտը, որոնց առաջ գլորուում էին հաղարաւոր մարդկանց դիակներ, մերկացած գնդեր, և այդ բոլորը լողում էին տեղ-տեղ լճացած արեան մէջ՝ վերջին «ախ»-երը թռցնելով կարկամած շրթունքներից և աչքերը փակում՝ յաւիտեան մնաս բարով ասելով այս անիծեալ աշխարհին, որտեղ ամեն բան դառն է ու դաժան։ (Լոութիւն)։ Եւ մեզ էլ կտոր-կտոր արած կը լինէին՝ եթէ թշնամու ճանկն ընկած լինէինք։

Օ՜, այս մեր մեղքն է, մեր ապաշխարանքն է, որ պիտի տանենք անխռով։

ԼԻԶ. —(Ցանկարծ). Ուրեմն աղօթիր, դուցէ Ամենաբարձրեալը գթայ մեզ և ների քո յանցանքները։

ՄԱՅՅ.—Մենք մեղաւոր ենք Նրա առաջ և մեր մեղսալից շրթունքները անարժան են մրմնջալու այն աղօթքները, որով պիտի փրկութիւն հայցենք Նրանից։

ԼԻԶ.—Նա ներողամիտ է, բարի ու արդարադատ, դուցէ Նա մեղաւոր չէ համարում քեզ այդ բանում։ Աղօթիր, աղօթիր ու ղղջայ քո մեղքերի համար. (աղօթում է). գթա մեզ... ամենա... (լսում է ոտնաձայն. Մայքերը հագիւ զսպելով իրան ընդհատում է Լիզայի աղօթքը)։

ՄԱՅՅ.—Սսս... սս... կարծեմ Աբբին գալիս է, ծածկիր քո տխրութիւնը և աշխատիր հանգիստ երևալ։

3. ՆՈՅՆՊ ԵՒ ԱԲԲԻ

ԱԲԲԻ. —(Մտնում է զիշերուայ հագուստով). Մայրիկ, ես արդէն...

ՄԱՅՅ.—(Յսելազարի պէս գրկում է նրան ու անդադար համբուրում). Աղջիկս, գաւակս... (արտասուախառն) հոգիս... թող... թող քեզ սեղմեմ կրծքիս...

ԱԲ.—(Աշխատելով ազատուել). Հայրիկ, այդպէս մի՛ անի, մազերս նոր եմ սանտրել, քանդում ես. (Լիզան ծածուկ լալիս է)։

ՄԱՅՅ.—Ներիր, սիրելիս, ես քեզ բարկացնել չէի կամենայ։ (Աչքերը ծածկում է ձեռներով, Աբբին աշխատում է բաց անել։

ԱԲԲԻ.—Լաց մի լինի, խնդրում եմ, ես էլ չէի կամենում քեզ վշտացնել. (նկատելով, որ չի լալիս). ինչ վատն ես, դու չես լալիս ու խաբում ես ինձ, ես կը գնամ մայրիկիս մօտ, դու ծաղրում ես ինձ. (աշխատում է հեռանալ, բայց հայրը պինդ սեղմում է կրծքին)։

ԼԻԶ.—(Հառաչելով). Կաց նրա մօտ,

նա քեզ շատ է սիրում։

ՄԱՑՖ.—Այս, սիրուն աղջիկս, մնացիր ինձ մոտ և նստիր ինձ. և իբրև պատիժ՝ հրամայիր ինչ ուզում ես, բոլորը կըկատարեմ։

ԼԻԶ.—(Դրսից լսում է ձայներ). Գայլերը...

ԱԲԲԻ.—Հէքեաթ պատմիր, հայրիկ։

ՄԱՑՖ.—Հա, հէքեաթ, ուրախ հէքեաթ։

ԱԲԲԻ.—Չէ, հայրիկ, միշտ չի կարելի ուրախ հէքեաթներ պատմել, այսօր մի այնպիսի հէքեաթ պատմիր, որ ամենքս էլ դողանք։ (Լռութիւն)։ Հա, հայրիկ, դայեակը ասում է, որ մարդիկ միշտ ուրախ չեն լինում. ճշմարիտ է (մայրը հառաչում է)։

ՄԱՑՖ.—Ճշմարիտ է թանգագինս, աշխարհում վիշտ էլ կայ։

ԱԲԲԻ.—Ուրեմն, հայրիկ, մի հէքեաթ պատմիր վշտի մասին, բայց այնպիսի սարսափելին, ինչպէս ասացի, ամենքս էլ վախենանք, կարծենք թէ այդ ցաւը մեզ է պատահել. (մօրը). մայրիկ, մօտ նստիր և ձեռս բռնիր, որ շատ չվախենամ։ (Մայրը զալիս է մօտը, Աբբին տեղաւորւում է երկուսի մէջ տեղ եւ ուշադրութիւնը լարում դէպի հայրը)։ Հիմայ սկսիր, հայրիկ։

ՄԱՑՖ.—Լաւ։ Կար չկար երեք գընդապետ կար...

ԱԲԲԻ.—Ես գիտեմ գնդապետը ինչ է. դու էլ գնդապետ ես, չէ՞։ Ցեռոյ։

ՄԱՑՖ.—(Դանդաղ պատմում է). Դու գիտես, որ պատերազմի ժամանակ ամեն բանից աւելի կարգապահութիւն է պահանջւում։

ԱԲԲԻ.—Այդ ուսելու բան է՞, հայրիկ։

ՄԱՑՖ.—Չէ՞, բոլորովին ուրիշ բան։ Այդ գնդապետները չկատարեցին մեծի հրամանը. նրանց հրամայւած էր, որ ձեացնեն թէ յարձակւում են թշնամու վրայ, որպէսզի գլխաւոր զօրքին միջոց տան նահանջելու, յետ դառնալու, բայց այդ գնդապետները չկարողացան իրենց զսպել, իսկոյն յարձակւեցին թշնամու վրայ, ջարդեցին նրանց ու փախցրին։ Մեծը բարկացաւ նրանց վրայ, որ ճիշտ չկատարեցին իրենց պարտքը և նրանց դատի ենթարկեց, թէև, իհարկէ, գովեց նրանց քաջութիւնը։

ԱԲԲԻ.—Մեծը Կրոմվիլն է, չէ՞ հայրիկ։

ՄԱՑՖ.—Այո։

ԱԲԲԻ.—Ես նրան տեսել եմ, նա յաճախ անցնում էր իր ձիով մեր տան առաջից, և միշտ կարծես բարկացած էր ու ամենքը վախենում էին նրանից. միայն ես չէի վախենում, նա միշտ ինձ վրայ քնքոյշ հայեացք էր ձգում։

ՄԱՑՖ.—Ա՜խ, անգին շատախօս... դէ լսիր հէքեաթը է՞։

ԱԲԲԻ.—(Փսփսալով հօրը). Լսում եմ, հայրիկ։

ՄԱՑՖ.—Գնդապետներին բանտարկեցին ու բերին Լօնդօն, այստեղ նրանցից ազնիւ խօսք առան ու արձակեցին, որ գնան մնաս բարով ասեն իրենց ազգականներին։

ԼԻԶ.—Կրկին քայլեր (լսում են)։

ՄԱՑՖ.—Չէ, անցան։

ԱԲԲԻ.—Ցեռոյ հայրիկ, գնացին։

ՄԱՑ.—Եւ ահա այս առաւօտ նրանք հասան Լօնդօն։

ԱԲԲԻ.—(Զարմացած). Ինչպէ՞ս, հայրիկ, այս առաւօտ, ուրեմն դա հէքեաթ չէ՞, ճշմարիտ եղած բան է՞։

ՄԱՑ.—(Վշտացած). Այո, զաւակս։

ԱԲԲԻ.—Որքան ուրախ եմ, այդ աւելի լաւ է. շարունակիր. (նկատելով մօրը). այդ ի՞նչ է, մայրիկ ինչու՞ ես լալիս։

ԼԻԶ.—Ոչինչ, անուշիկս... ես մտածեցի նրանց ազգականների մասին։

ԱԲԲԻ.—Լաց մի լինիր, մայրիկ, կը տեսնես, որ վերջը լաւ կըլինի, հէքեաթները միշտ լաւ են վերջանում։ (Հօրը). Դէ, շուտ արա, շարունակիր. վերջը ամենքն էլ երջանիկ կըլինեն,

գիտեմ այ, մայրիկ, կըտեսնես։

ՄԱՑ.—Ամենից առաջ նրանց տարան բերդը։

ԱԲԲԻ.—Օ՜, ես ճանաչում եմ բերդը, այստեղից երևում է. նա է, չէ՞. (ցույց է տալիս). յեռոյ, հայրիկ։

ՄԱՑ.—Նա է, այո. բերդի զինուորական դատարանը մահուան դատապարտեց նրանց։

ԱԲԲԻ—(Սարսափած) Սպանել, հայրիկ։

ՄԱՑ.—(Վշտացած). Այո զաւակս, սպանել։

ԱԲԲԻ,—Ֆու, ինչ վատ են. (մօրը) մայրիկ, դու դարձեալ լալիս ես, լաց մի լինի, ամեն բան լաւ կանցնի. (հօրը) շուտ-շուտ պատմիր, հայրիկ, շատ դանդաղ ես պատմում։

ՄԱՑ.—Գիտեմ աղջիկս, բայց պիտի մատծեմ պատմելիս։

ԱԲԲԻ.—Մի մատծիր, ուղղակի պատմիր։

ՄԱՑ.—Լաւ, երեք գնդապետները...

ԱԲԲԻ.—Սպասիր հայրիկ, մի բան հարցնեմ. դու նրանց ճանաչում ես։

ՄԱՑ.—(Տատանելով). Այո, սիրելիս... Թէպէտ և գնդապետները մահուան դատապարտեցան, բայց նրանք անարկիւղ կամենում են մեռնել։

ԱԲԲԻ.—Անարկիւղ. և նրանք չեն վախենում մահից, ահ, ինչ քաջեր են։

ՄԱՑ.—Այո, ազատնակս, ամենքը ցաւում էին այդ վճռի համար, մինչև անգամ դատաւորները իրանք գնացին զլխաւոր հրամանատարի մօտ և ասացին, թէ գնդապետները իրենց պարտքն են կատարել, չի՞ կարելի արդեօք նրանց կեանքը խնայել, կամ գոնէ նրանցից մէկին միայն գնդակահարել։

ԱԲԲԻ.—Եւ ինչ, հայրիկ, մեծը համաձայնուեց։

ՄԱՑ.—Մեծը չհամաձայնուեց, ասելով թէ՝ ճշմարիտ է, գնդապետները իրենց պարտքն են կատարել, բայց միևնոյն ժամանակ նրանք օրինազանց են գտնուել, ուստի պէտք է կրեն իրենց պատիժը, որպէսզի ուրիշներին օրինակ լինեն։

ԱԲԲԻ —Բայց հայրիկ, ինչու էին գնդապետները այդպէս անում, երեխաներ հո չէին։

ՄԱՑՖ.—Սիրելիս, միայն երեխաները չեն, որ սխալուում են, մեծերն էլ են ենթարկուում սխալների, և աւելի շատ՝ քան փոքրերը։

ԱԲԲԻ.—Եւ ինչ, հայրիկ, դրա համար պէտք է սպանեն։

ՄԱՑՖ.—Դեռ դրանով չվերջացաւ։ Մեծը նրանց կանչեց իր մօտ և հարցրեց դատապարտուածներին՝ թէ ինչպէս կըվարուէին, եթէ իր տեղը լինէին։ Երեքն էլ միաբերան ասացին, որ իրենց անհնազանդութեան համար արժանի են պատժի։ Այս պատասխանը շատ յուզեց հրամանատարին, նա մի բոպէ մտածելուց յետոյ ասաց.—վիճակ ձգեցէք, թող մէկը մեռնի, իսկ միւսները կենդանի մնան։

ԱԲԲԻ.—Յետոյ, հայրիկ, վիճակ ձգեցին, և ոբին ընկաւ նրանցից։

ՄԱՑՖ.—Ոչ, մերժեցին։

ԱԲԲԻ.—Ինչու։

ՄԱՑՖ.—Նրանք ասացին. — մենք միասին ենք խանգարել զինուորական կարգապահութիւնը և միասին էլ պիտի պատժուենք։

ԱԲԲԻ.—Օ՜հ, հայրիկ, ինչ սարսափելի հէքեաթ ես պատմում. խեղճերը պէտք է մեռնեն, յաւիտեան պիտի բաժանուեն իրենց ազգականներից... հայրիկ, նրանք որդիք ունեն. խեղճ զաւակներ... (Մայքերը եւ Լիզան չեն կարողանում իրենց զսպել, բարձրաձայն հեկեկում են. Մայքերը Աբբիին սեղմում է կրծքին)։ Ինչու էք լալիս. (շարած ինչ էք պատահել, հայրիկ, ինչու ես լալիս, դէ, պատմութիւնը շարունակիր. մայրիկ, դեռ չէ վերջացրել իր պատմութիւնը. դեռ չեն սպանել. գուցէ ազատուելու են, ես այնպէս ասացի, թէ ինչ կըլինի նրանց դրութիւնը՝ եթէ սպանեն։ Դէ.

լոեցէք, ես էլ չեմ խօսի, շարունակէք հայրիկ, դու հօ պատմութիւնը գիտես, գիտես որ նրանք կենդանի են, դու ինչու՞ ես լալիս։ (Փոքը լռութիւն։ Դրսից լսում է ոտնաձայներ եւ ապա երաժշտութիւն)։

ԼԻԶ.—Օ՜, կրկին քայլեր, կրկին ձայներ... քամին է... ոչ, ոչ, իսկական քայլեր են... Զինուորական երաժշտութիւն. ահ, եկան...

4. ՆՈՅՆՔ և ՍՊԱՍԱՒՈՐ

ՍՊԱՍԱՒՈՐ—(Մտնում է զլուխը խոնարհելով)։ Ոստիկանութիւնը զինուորների հետ կամենում է ներկայանալ ձերդ մեծապատուութեան։

ՄԱՑՖ.—(Լիզան կամենում է դուրս գնալ, բայց Մայֆերը արգելում է). ասա, որ պատրաստ եմ ընդունելու։ (Սպասաւորը գնում է)

ԱԲԲԻ.—Մի փոքը լռութիւնից յետոյ). Զինուորներ են, հայրիկ, ես սիրում եմ զինուորներին, թող ես բանամ դռները. (բաց է անում ու կանգնում շէմքում). Հայրիկ, ռմբաձիգներ են, ես սիրում եմ ռմբաձիգներին։ Հայրիկ, ինչ գեղեցիկ շարէ-շար կանգնել են դաւթում, նրանց երաժշտական խումբը մօտենում է մեր նախասենեակին։ (Լիզան ու Մայֆերը լուռ զրկած են միմեանց)։

5. ՆՈՅՆՔ, ՍՊԱՑ, ԶԻՆԻՈՐՆԵՐ

ՍՊԱՑ—(Մտնում են զինուորները իրենց մեծի առաջնորդութեամբ, մեծը առաջ է անցնում, զինուորական պատիւ է տալիս,որին եւ նոյն ձեւով պատասխանում է Մայֆերը, իսկ զինուորները այդ ժամանակ անցնում են Մայֆերի հետեւը. կինը դողում է, իսկ Աբբին հրճւում է, մերթ կանգնած ապային է դիտում, մերթ հօրը)։ Մեծ իշխան Կրոմվիլը սպասում է բերդում ձերդ մեծապատուութեան։ Ցառաջ դէպի բերդ։ (Մայֆերը հրաժեշտ է տալիս կնոջն ու Աբբիին եւ ապա առաջ է գնում հաստատ քայլերով)։

ՄԱՑՖ.—Մնաք բարով, իմ պաշտելիներ։

ԼԻԶ.—(Յսելազարի պէս ճչում է աշխատելով դուրս գնալ ամուսնու ետեւից)։ Ոչ դու չպիտի գնաս... մենք էլ, մենք էլ քեզ հետ դէպի... (Զինուորները դուռը ծածկում են եւ ինքը մնում է տենդային դրութեան մէջ)։

ԱԲԲԻ.—(Մօտենալով մօրը). Տեսար մայրիկ, ինչ լաւ վերջացաւ, ես ասում էի քեզ, թէ հէքեաթները միշտ լաւ են վերջանում, հայրիկը գնաց, որ ազատէ խեղճ գնդապետներին, իսկ դու նեղանում ես, լաց ես լինում և մինչև իսկ արգելում էլ ես, որ նա չգնայ... (Մայրը պապանձուած է ու սպշած). Հ՛ը, մայրիկ, դու չես խօսում։

ԼԻԶ.—(Գրկում է Աբբիին, ուժասպառ). Խեղճ զաւակս, նա գնաց... գնաց և այլևս... (Ընկնում է)։

ԱԲԲԻ.—(Ճչալով). Մայրիկ, մայրիկ, այդ ինչ ես անում, վեր կաց, մայրիկ, (Համբուրում է). Վա՛յ, քնում ես, մայրիկ, վեր կաց, ես կը գնամ հայրիկիս ետեւից, վեր կաց, մայրիկ. (Ընկնում է վրան եւ յուսահատ լալիս)։

ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանն է բեղի գրասենեկը որ ապխտակումով բաժանուած է Հարեան սենեակից

1. ԿՐՈՄՎԻԼ, ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԵՐԿՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՅ

ԿՐՈՄՎԻԼ.—Օ՜հ, Աստուած իմ, ազատիր ինձ այս ծանր դրութիւնից. ինչ անել. երեքին կախել, անտանելի է, ներեմ, արձակեմ նրանց ազատ՝ նշանակում է ես էլ կալմնակից եմ անկարգապահութեան. (լռութիւն). և ինչպէս վիճակ ձգել, քանի որ նրանք համաձայն չեն։ Ես իմ ձեռքը չեմ թաթախի անմեղ արեան մէջ, ես թոյլ չեմ տայ, որ երեք հոգի կախուեն. կը համոզեմ, իսկ եթէ ոչ, ես ինքս առանձին վիճակ կը ձգեմ և այնուհետև կորոշի մէկի բաղդը։ Թող ինչ ուզում են ասեն. թէկուզ ինձ պաշտօնազուրկ անեն, բայց ես երկու հոգու կեանք փրկած կը լինեմ... (լռութիւն. Նայում է ժամացոյցին). Ժամանակը մօտենում է, շտապեմ, ժամը հնգին պէտք է հեռագրել պալատ և գործի էութիւնը բացատրել։

ՔԱՐՏՈՒՂ. — Տէր, արձանագրութիւնը արդէն պատրաստ է։

ԿՐՈՄ.—(Կարդում է եւ ապա ստորագրում). Տար յանձնիր դատաւորին, թող դատապարտուած գնդապետների առաջ կարդան և ապա նրանց կարծիքը իմացիր ու բեր։ (Քարտուղարը գնում է)։

ա. ՊԱՇՏ.—(Նենգ). Տէր, եթէ թոյլ կըտաք, մի քանի խօսք էլ ես կասեմ այդ գործի մասին։

ԿՐՈՄ.—Պատրաստ եմ լսելու, որովհետև խորհուրդները երբեմն օգտակար են լինում։

ա. ՊԱՇՏ.—այո, հէնց ձեր օգտին է վերաբերում՝ եթէ պատիւ անէք ինձ լսելու։ Ես իբրև բանտի վերահսկիչ՝ նկատել եմ, որ եթէ ազատուեն այդ գնդապետները, ամբոխը պատրաստուել է յարձակում գործել բանտի վրայ ու ազատել բոլոր բանտարկեալներին, առարկելով որ եթէ օրէնքի առաջ նրանք արդարանում են, կարգապանան և միւս յանցաւորները, որոնք համարեայ նման յանցանք են գործել։ Մի խօսքով ամբոխը պահանջում է միւս բանտարկեալների անպայման ազատութիւնը։

ԿՐՈՄ.—(Մոայլ). բայց ովքեր են այդ պահանջողները, մի քանի անհատներ, թէ ժողովուրդը։

ա. ՊԱՇՏ.—Ոչ, տէր իմ, ժողովուրդը, որոնց միացել են նաև զինուորներ, որոնք նոյնպէս պահանջում են իրենց ընկերների ազատութիւնը և եթէ...

ԿՐՈՄ.—(Զայրացած թոչում է տեղից). Ձայնդ. այլևս պէտք չեն ինձ քո խորհուրդները, այդ բոլորը ինձ տանջանք ու վիշտ են պատճառում... բայց ոչ, նախ ասա թէ այդ բոլորը որտեղից և ինչպէս իմացար։

ա. ՊԱՇՏ.—(Վախեցած), Ես... ես... իմացայ մեր ընկերներից, որոնք իմացել են ժողովրդական դաղտնի կուսակցութիւններից...

ԿՐՈՄ.—Դաղտնի կուսակցութիւններից, նրանք հակառակուում են գընդապետների ազատութեան։

ա. ՊԱՇՏ. այո, նրանք հակառակում են և չեն ցանկանում ազատութիւն. այդ գիտէ և իմ այս ընկերը։

բ. ՊԱՇՏ.—այո, ճիշտ է ծերունու նկատողութիւնները, նրանք պիտի կախուեն, ոչ մէկն էլ չպէտք է կենդանի մնայ. ապա թէ ոչ մեծ վտանգ է

սպառնում թէ բանտին և թէ պալատին։

ԿՐՈՄ.—Ես չեմ վախենում ժողովրդի, կամ այդ մի քանի գաղտնի խմբակների սպառնալիքներից։ Ես միայն վախենում եմ իմ խղճի արդար բողոքից և ինչպէս վճռել եմ, այնպէս էլ կանեմ։

ՄԻԱՍԻՆ—Տէր, մեր պարտքն է նախազգուշացնել ձեզ։

ա. ՊԱՇՏ.—Մենք խնայում ենք ձեր կեանքը, եթէ նրանք ազատուեն ու դարձեալ տիրանան իրենց պաշտօնների՝ կենդանի չեն մնայ... և... և... դուք... ինչպէս կամենաք...

ԿՐՈՄ.—(Բարկացած). Լռեցէք, ես ձեր խօսքերում նկատում եմ մի ինչ որ բան, դուք նենգաւորներ էք...

2. ՆՈՅՆՔ և ՔԱՐՏՈՒՂ.

ՔԱՐՏ.—(Երբ նկատում է յուզմունքը՝ մնում է արձանացած)։

ԿՐՈՄ.—(Պաշտօնեաներին). Դուք այսօրուանից կըբանտարկուէք մինչև գործի քննութիւնը. կորէք աչքիցս։

ա. և բ. ՊԱՇՏ. — (Դողալով). Մի զայրանաք, տէր, դուք նախ լսեցէք գործի եղելութիւնը...

ԿՐՈՄ.—այլևս չեմ կամենում խօսել ձեզ հետ և լսել ձեր ձայնը, ապակենիներ. (քարտուղարին). կարդացէք։

ՔԱՐՏ.—այո, թէև գնդապետները մերժեցին, բայց և այնպէս յայտնեցին իրենց ցաւակցութիւնը, որ ստիպուած են մերժել ձեր որոշումը։ Նրանք ձեր վարմունքը բոլորովին իրաւացի են գտնում, բայց միևնոյն ժամանակ ուխտել են բոլորը միասին մեռնել։

ԿՐՈՄ.—Իսկ ինչպէս էր նոյն ժամին ժողովրդի տրամադրութիւնը։ (Պաշտօնեաներն իրենց անյարմար են զգում)։

ՔԱՐՏ.—Ժողովուրդը ցնծում էր ուրախութիւնից, ծափահարում էին անվերջ և գոհ էին ձեր վճռից... Նրանք ասացին, մենք նախ կըցանկանայինք երեքի լիակատար ազատումը, իսկ եթէ օրէնքը այդ անհնար է գտնում, լաւ է, որ վիճակ ձգուի։ Արդարադատ վճռից գոհ սրտով հեռացաւ ժողովուրդը օրհնելով ձեր թանգագին կեանքը։

ա. և բ. ՊԱՇՏ.—(Սարսափահար մընում են եւ խոժոռ քարտուղարին նայում)։

ԿՐՈՄ.—(Մի փոքր մտածելուց յետոյ)։ Ուրեմն ժողովուրդը գոհ է։ (Պաշտօնեաներին). Սրան ինչ կասէք, Ցուդաներ. (քարտուղարին). զինուորներ կանչիր այստեղ. (քարտուղարը գնում է). Մինչև երբ ձեզ պէս աղէտները պէտք է մեծերի ոտքերի տակ սողան և մտքերը պըղտորեն իրենց խարդախ խորհուրդներով. դուք ոչ թէ հաւատարիմ ծառաներ էք, այլ սարկահոգի դևեր. ձեր տեղը տաժանակիր աքսորավայրն է։

3. ՆՈՅՆՔ ԶԻՆԻՈՐՆԵՐ և ՔԱՐՏ.

(Զինուորները՝ հրացաններով կանգնում են զինուորական պատշաճաւոր դիրքով)

ԿՐՈՄ.—Տարէք սրանց ու յանձնեցէք գեներալ Էդուարդին, բանտարկել մինչև իմ նոր կարգադրութիւնը. պոկեցէք ուսադիրները և վերցրէք սրերը. (հրամանը կատարում են). դուրս տարէք. (գնում են). իսկ դու այժմ կանչիր այստեղ հերթապահ սպային։

ՔԱՐՏ.—(Ուզում է գնալ, բայց պատահում է նրան). ահա նա։

4. ՆՈՅՆՔ և ՍՊԱ.

ՍՊ.—(Ներս է մտնում եւ զինուորական պատիւ է տալիս)։

ԿՐՈՄ. Լաւ էր որ եկար, դուրս գնա փողոց և առաջին պատահած երեխային բեր ինձ մօտ։

ՍՊ.—Իսկոյն, ձերդ ազնուութիւն. (գնում է)։

ԿՐՈՄ.—(Քարտուղարին)։ Տես, արկղի մէջ, արդեօք վիճակի գնդակները

այնտեղ են, թէ մոռացել են պատրաստել։

ՔԱՐՏ.—(Արկղում գտնում է կարմիր, կանաչ եւ դեղին գնդակներ). ահա նրանք այստեղ են տէր։ (Կրոմվիլը չի լսում, անց ու դարձ է անում). Սրանք են այնպէս չէ՞, տէր, կանաչ, կարմիր, դեղին. (զգուշութեամբ մօտենում եւ ցոյց է տալիս). ահաւասիկ։

ԿՐՈՄ.—(Նկատելով). Հա, ինչպէս։

ՔԱՐՏ.—Ներեցէք, ուզում էի իմանալ, թէ սրանք են արդեօք ձեր ասած գնդակները։

ԿՐՈՄ.—Դրանք են, այո. կարմիրը ում ընկնի, նա պէտք է պատժի։

ՔԱՐՏ.—Կարմիրը՞։

ԿՐՈՄ.—Շատ պարզ է. այդպէս է ընդունուած սովորութիւնը։ Դիր իմ արկղում։

ՔԱՐՏ.—(Արկղի մէջ դնելով)։ Ո՞վ գիտէ, անպիտան կարմիր գնդակի գուշակութեամբ ում ճրագը կը մարի։

ԿՐՈՄ.—(Մի փոքր ման գալուց յետոյ)։ Դու այժմ գնա և, կարգադրիր իմ կողմից, որ պատրաստուեն դատապարտուածներին բերելու այս կից սենեակը, շարքով կանգնեցնեն երեսնե�ը դէպի պատը, իսկ մի-մի ձեռքերը դէպի յետ պարզած։

4. ՆՈՅՆՔ, ՍՊԱ, ԱԲԲԻ

ՍՊ.—(Աբբիի ձեռքից բռնած). ահա և նա, ձերդ ազնուութիւն. (Կրոմվիլը յետ է նայում, Աբբին զուխ է տալիս)։

ԱԲ. — Պատիւ ունիմ ողջունելու ձերդ ազնուութեան։

ԿՐՈՄ.—(Նստելով). բարով ազջիկս. (սպային). գնա քարտուղարի մօտ և որքան կարելի է շուտ աւարտեցէք գործը (սպան գնում է)։

ԱԲ. — (Մօտենում է, բարեւում բաղաքավարութեամբ ու ոտից զուխ նրան զննելուց յետոյ գնում գոգում նստում է. Կրոմվիլը բոլոր ժամանակ մնում է զմայլած)։ Դուք մեծ իշխան Կրոմվիլը չէք, ես ձեզ ճանաչում եմ, մեր տան առաջից անցնելիս՝ ես ձեզ շատ եմ տեսել։ Ամենքը ձեզանից վախենում էին, միայն ես չէի վախենում, դուք երբէք ինձ վրայ բարկացած չէք նայել, յիշում էք ինձ, մտաբերում էք։ Ես հագած ունէի կարմիր վերարկու, իսկ առաջից կախուած էին երկու կապոյտ ժապաւէններ։ Չէք յիշում։

ԿՐՈՄ.—(Հրճուանքով). Ես շատ եմ ցաւում, մանկիկ, ես ամաչում եմ, որ...

ԱԲ.—(Ընդհատելով). Ուրեմն մոռացել էք։ Ես ձեզ չեմ մոռացել։

ԿՐՈՄ.—այլևս չեմ մոռանայ քեզ, խօսք եմ տալիս, ներիր ինձ, արի բարեկամանանք։ Դու ինձ յիշեցնում ես աղջկանս, որ այլևս չկայ։ Նա էլ քեզ պէս գգւոզ ու սիրալիր էր, նա էլ ոչ ոքից չէր քաշւում, մօտենում էր ամենքին, բաղդաւորեցնում էր իր գգւանքով... նա յաճախ նստում էր գոգումս, ինչպէս հիմա դու ես նըստած և քեզ պէս էլ թեթեւացնում էր սիրտս հոգսերից ու վշտից. մենք միշտ միասին էինք .. (հառաչում է). այդ վաղուց էր, շատ վաղուց։

ԱԲ.—Եւ դուք նրան սիրում էիք, շատ էիք սիրում...

ԿՐՈՄ.—Ի հարկէ, նա հրամայում էր, ես կատարում էի։

ԱԲ.—Որքան բարի էք, համբուրեցէք ինձ։

ԿՐՈՄ.—Ուրախութեամբ, ահաւասիկ. (համբուրում է). այս էլ իմ հանգուցեալ փոքրիկին։ Հիմա դու էլ կարող ես հրամայել, ես կլսեմ ու կը կատարեմ։

ԱԲ.—(Դրսից լսում է երաժշտութեան ձայներ, ուրախութիւնից ծափահարում է). Վայ, զինուորներ են, զինուորներ, ուզում եմ տեսնել նրանց։ (Դեղապետներին բերում են հարեւան սենեակը եւ կանգնեցնում)։

ԿՐՈՄ.—(Թողլ չտալով). իսկոյն, սիրունիկս, սպասիր. ես քեզ մի յանձնարարութիւն պիտի անեմ. (արկղից գնդակները հանելով տալիս է). առ սրանք։

ԱԲ. —(Զարմացած). Ի՞նչ սիրուն գնդակներ են, կամիրն էլ իմս է։

ԿՐՈՄ.—Ոչ աղջիկս. դրանք ուրիշի համար են, նայիր այնտեղ, այն միւս սենեակում, դու կըտեսնես երեք մարդ, որոնց երեսները դէպի պատն են դարձրած, իսկ մի ձեռքը յետևը պարզած։

ԱԲ.—Լաւ, ես կըգնամ այնտեղ, յետոյ ինչ պիտի անեմ այս գնդակները։

ԿՐՈՄ.—Համբերիր, որ ասեմ է, յետոյ դու այս գնդակներից ամեն մէկը կըդնես նրանց ամեն մէկի ափի մէջ ու երբ արդէն բաժանած կըլինես՝ վերադարձիր մօտս. դէ գնայ. (Աբքին գնում է)։ Աստուած ներշնչեց ինձ այս միտքը. այժմ ես համոզուած եմ, որ արժանաւորագոյնները կենդանի կը մնան, այնուհետև խիղճս հանգիստ կը լինի. (նստում է). օ, որքան ծանր էր ինձ երեքի կախուած մարմինները տեսնելը։ Իսկ այժմ ազատ եմ խղճիս ու ժողովրդի առաջ պատասխանատուութիւնից. (սկսում է զբաղել)։

ԱԲ. — (Կանգնածներին ծածուկ գնում է, իսկ երբ նկատում է հօրը՝ զարթնում է)։ Հայրիկը. ինչ լաւ է ես ճանաչեցի, ինչպէս մէջտեղն է կանգնել, ես նրան շատ եմ սիրում. այս կարմիր գնդակը նրան կըտամ. (Տալիս է եւ յետոյ զրուցը թեւի տակից մեկնում). Հայրիկ, հայրիկ, տես ինչ կայ ձեռքումդ, այդ ես եմ դրել։

ՄԱՑՖ.—(Դատնալով Աբքին). Զաւակս, դու այստեղ... (զրկած լալիս է)։

ԱԲ.—(Վախեցած). այո, ես այստեղ եմ, ինչ է, ինչու ես լալիս, չէ՞ որ քեզ կարմիրը տուի։ (Միւսները զարմացած նայում են)։

ԿՐՈՄ.—Ես կըհեռագրեմ, որ յանուն արդարութեան վիճակ ձգեցինք և մէկը զոհուեց։

ՍՊ.—(Բաշալերելով). Հանգիստ եղէք, գնդապետ, ինձ չափազանց ծանր է այդ, բայց պարտքը ստիպում է, թէ չէ...

ԱԲ.—(Ցանկարծ). ինչ է ստիպում։

ա. ԳՆԴ.—Ո՞վ արդարութիւն... այս ինչ ենք տեսնում...

բ. ԳՆԴ.—Ոչ, չենք ցանկանում...

ՍՊ.—Պէտք է հօրդ տանենք։

ա. և բ. ԳՆԴ.—Մենք էլ, մենք էլ...

ԱԲ.—Տանէ՞ք... ինչու... որտեղ...

ՍՊ.—Ես պիտի տանեմ նրան բերդի միւս կողմը։

ԶԻՆՈՐՆԵՐ,— (Միմեանց). Խեղճ երեխայ, չի իմանում, որ հօրը պիտի կախեն։

ԱԲ.—(Սպային). Չէ, այդ չի կարելի, մայրիկս հիւանդ է. հայրիկս պիտի ինձ հետ տուն վերադառնայ. (կախուելով հօր վզից). գնանք, հայրիկ։

ՄԱՑՖ.—(Համբուրելով) աղջիկս, ես չեմ կարող քեզ հետ գալ, պիտի նրանց հետ գնամ։

ՍՊ.—այո, նա չի կարող ձեզ հետ գալ։

ԱԲ. –(Հօր վզից պոկուելով ոտը խփում է գետնին). Չէ՞ որ ասացի՝ մայրիկը հիւանդ է, պէտք է շուտով տուն վերադառնանք։

ա. և բ. ԳՆԴ.—այո, պէտք է գնայ, պէտք է թողնել։

ՍՊ.—Շատ ուրախ կըլինէի, եթէ հնար ունենայի ձեր հօրը թողնել, բայց անկարող եմ. (զինուորներին). դէհ, յառաջ...

ՄԱՑՖ.—(Գրկախառնուելով). Զաւակը... աղջիկս... տրի մի անգամ ես համբուրեմ... վերջին անգամ...

ա. և բ. ԳՆԴ.—Մենք էլ պատրաստ ենք մեր ընկերոջ հետևելու։

ՍՊ.—Ոչ, այդ արդէն օրէնքից դուրս է, դուք սպասեցէք մինչև նոր կարգադրութիւնը։

ԱԲ.—Ուրեմն դու այլևս չես դայ. (Դադարում է ուժգին). Կրոմվել, Կրոմվել, հասէք շուտ, հօրս տանում են։

ԿՐՈՄ.—(Արագ մտնում է). Ինչ պատահեց քեզ։

ԱԲ.—(Հեկեկալով). Կանգնեցրէք սը-բանց, մի թողնէք որ գնան, մայրիկս հիւանդ է, ես նրան հազիւ կարո-ղացայ ուշքի բերել, հիմա հայրիկը պիտի գնայ նրա մօտ, ես ասացի սը-բանց, բայց չեն լսում և ուզում են տանել հօրս։

ԿՐՈՄ.—(Ապշած). Ինչպէս թէ հո-բրդ, սա քո հա՞յրն է.

ԱԲ.—այո, ի հարկէ, թէ չէ ինչու նրան պէտք է կարմիրը տայի։

ԿՐՈՄ.—(Մի կողմը). Աստուած իմ, ես ուզում էի, որ ամէն բան լաւ վեր-ջանար և յանկարծ այս ինչ զարհուրելի եղեռնագործութիւն եմ ուզում կատարել։

ԱԲ.—(Կրոմվելի գիրկն է նետում). Դու կարող ես ասել, որ բաց թողնեն նրան, ուրեմն ասա, դու խոստացել ես ինձ լսել, և ահա ես խնդրում եմ և դու չես ուզում խընդիրս կատարել։

ԿՐՈՄ.—Փառք Աստուծոյ, որ ժամանակին վրայ հասաւ. (Աբբիին). Զաւակս, դու ճիշտ ես ասում, ես խոստացայ կատարել քո հրամանը և ահա կատարում եմ խոստումս. (Մայ-ֆերին). Գնդապետ, ազատ էք, գնա-ցէք ձեր աղջկայ հետ. (Աբբին թռչում է հօր մօտ եւ ձեռքից բռնում)։

ԱԲ.—Հայրիկ, գնանք մայրիկի մօտ. (Թեքելով գլուխ է տալիս Կրոմ-վիլին). Շնորհակալութիւն։

ԿՐՈՄ.—(Հիացած նայում է հոսի-ից). Զարմէ, փրկարար հրեշտակ...

ՎԱՐԱԳՈՅՐ

ՈՐՍԿԱՆՔ

(Մենախոսութիւն բեմի համար)

Որսում են։ Ամեն կողմ շների հաչոց,
աղմուկ, խմբու

հո չէ կարելի ծաղրել անարդար։
Ոչ ոք չըգիտէ ճշմարտութիւնը,
թէ այժմ, այս մեր քարասիրտ դարում.
ով է աւելի յարգում, մեծարում
ծնողներին—մարդը, թէ անասունը.
ում զաւակներն են աւելի մեռնում,
խնդրեմ, թոյլ տուէք, որ ձեզ հարցնենք.
ովքեր են իրանց կեանքերը զոհում,
իրանց ընտանեաց սիրուն—նրանք, թէ մենք։
Ես դեռ չեմ տեսել, որ բադն իր զաւակին
յանձնէ մի օտար ծծմօր խնամքին...
իսկ կրթութիւնը հանաք չըկարծէք։
Տեսել էք արդեօք սարեակների մէջ
պճնասէր կանանց և կամ մայրերի,
որ մարդկանց տունը քանդէին անխնայ,
ինչպէս դուք, mesdames. և ինչու թագցնել—
ոչ նապաստակին և ոչ էլ գայլին,
ոչ էլ մինչևիսկ եղջերուներին
իրանց կինները չեն դաւաճանել
այնպէս՝ ինչպէս որ մեր կինները մեզ.
ոչ ինձ, ի հարկէ, այլ ով ունի կին...
Հարանացուներից փախչում եմ այնպէս,
ինչպէս ժանտախտից—վկայ իմ հոգին։
Իսկ դուք տեսել էք, որ փասիանները
ճաշարաններում ամբողջ գիշերը
հրահրային ու պարեր սարքէին,
քէֆեր անէին ու լուսաբացին
միայն պառկէին քնելու՝ ոտները
մի կերպ քարշ տալով մինչև տները.
տեսել էք դուք։ Ոչ. որովհետև այդ
նրրանց բանը չէ—այդ կեանքը շրւայտ,
արբեցողութիւն—նրրանք հընազանդ,
համեստ են ապրում։ Լսած էք գոնէ,
որ կաքաւը, երբ աշխարհքը քընէ,
նա կառքով պտանայ դէպի... Սամարղանդ։
Ի հարկէ, որ ոչ։ Հապա ո՞ր ծիտը
կաշառք է կերել։ Գայլն ի՞նչ է արել.
նոյնպէս տատրակը ե՞րբ է սուտ խօսել։
Է՛, բայց աղէսի պաշտպան փիթփիթը
կարող է միթէ յանդգնել ասել՝
«Ես արդար դատը արհամարհում եմ,
հասարակութեան վրայ թըքում եմ»։
Այդ հօ ուղղակի չի լինիլ երբէք.
ճշմարիտ է, չէ՞. դուք համաձայն էք,
այո։ Ասացէք ինձ, թըռչուններից
ո՞րն իր անցեալը անըզգուշաբար

արհամարհում է, ոտնատակ տալիս,
մոռանում դաշտն ու մայրենի անտառ.
նոյնիսկ մի թռչուն կայ՝ անունը մոշահաւ.
որ պահպանում է իր ճանհիճը խոնաւ։
Տեսէք, գայլն էլ չէ գայլին թալանում.
իսկ մենք ամեն ժամ, արձակ, անդադար,
միշտ թալանում ենք արդար-անարդար։
Մի թէ՞, պարոններ, ես սուտ եմ խօսում.—
մի կողմը թողնենք մռայլ պատկերները.
չէ՞ որ չեն գրաւում մեզ լուրջ բաները...
չէ՞ որ այդպէս է. օր չի լինիլ, որ
ազնախրմբութիւն, չէ՞ չուզենք ձրրի։
Զէ՞, թողթ է խաղում ամբողջ Ռուսաստան,
և Ռուսաստանում իզուր չեն թնդում
այս գոչիւնները՝ «Փա՛ս, առանց կոզրի».
ինչպէս գազանաց աղմուկն անտառում...
Թրռչունի, գայլի, արջի ցեղերը—
թղթախաղի վրայ ժամեր չեն կորցրել,
իրանց ջանքերի շնորհիւ են ապրում։
Գրրաց եմ գալիս, որ ոչ մի հովտում,
ոչ անտառի մէջ և ոչ էլ ճահճում
չէք կարող տեսնել արտառոց բաներ,
այն իդէաներն ու ծաղրածութիւնը,
ինչ որ ունենք մենք։ Այդպիսի հանաք
այնտեղ չըկայ, չէ՞։ Շանտաժն, օրինակ—
աղէաներն անգամ այդ բանը չունեն.
կաֆէ-շանտաններ, եւ օպերետներ.
եւ աղջիկների խուլոտ խմբերգեր՝
նրանք ամենևին հասկանում էլ չեն։
Եւ նրանք մեզ պէս չեն էլ դողանում.
նրանք ազնիւ, համեստ, լաւ ապրել գիտեն,
ունեցածով են բաւականանում։
Հաւատացէք, որ եթէ մենք նրանցից
քիչ սովորէինք... նոյնիսկ գայլերից՝
ընդմիշտ կըպակսէր գողութիւնն մեզնից ..
Այդպէս ուրեմն... այս սրտով գրթոտ՝
ինչպէ՞ս ունենամ սպանելու սէրը.
ճշմարիտ, այնքան այդ գազանները
սիրելի են ինձ, այնքան սրբտիս մօտ...։
Նրշան եմ դրնում, ուզում արձակել,
բայց .. մէկ էլ տեսար՝ տեղին չեմ խփել..
Որքան ես շատ եմ ուսումնասիրում
կեանքը և մարդկանց, այնքան սրբտագին
և աւելի եմ յարգում ու սիրում
ես... գազաններին։

Թարգմ. Ա. Ա.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0063994

ЦЕНА
A 111
1593